ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» դեկտեմբերի 2025թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
4-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան քաղաքի ավագանու 5-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը (կցվում է):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՕՐԱԿԱՐԳ

1. Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան համայնքում տեղական տուրքերի 2026 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին: (Զեկուցվող)
3. Երևան համայնքում տեղական վճարների 2026 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին: (Զեկուցվող)
4. Երևանի զարգացման 2026 թվականի ծրագիրը հաստատելու մասին: (Զեկուցվող)
5. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
6. Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ: (Զեկուցվող)
7. «Կասկադ մշակութային հանգույց» ճարտարապետական նախագծի իրականացման համար տրամադրված հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճարը անշարժ գույքի տարեկան դրույքաչափով հաշվարկելու մասին: (Զեկուցվող)
8. Գայի պողոտայի հ.45/7 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով Արմեն Արսենյանին պատկանող հողամասը Դավիթ-Բեկի փողոցի հ.95/2 հասցեին հարող տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Զեկուցվող)
9. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Զեկուցվող)
10. Գայանե Պետրոսյանին և Ալլա Մանուկյանին բնակարանի գնման վկայագրեր տրամադրելու մասին: (Զեկուցվող)
11. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի N 527-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
12. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
13. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Լեփսիուսի փողոց հ.6 հասցեում Երևանի հ.136 հիմնական դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
14. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Հ. Թևոսյան փողոց հ.1/5 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

15. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Քըրք Քըրքորյանի փողոց հ.23/8 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

16. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին: (Չզեկուցվող)

17. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին: (Չզեկուցվող)

18. Միեր Մկրտչյանի արձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)

19. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի ապրիլի 12-ի N85-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)

20. «Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Չզեկուցվող)

21. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)

22. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N 632-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)

23. Երևան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին: (Զեկուցվող)

24. Երևան համայնքում 2026 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին: (Զեկուցվող)

25. Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին: (Զեկուցվող)

26. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 405-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)